ԵՐԵՎԱՆԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

2025

ԵՐԵՎԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐ

Երևան քաղաքի ավագանու
2024 թվականի դեկտեմբերի ...-ի
N ...-Ա որոշում

Երևանի զարգացման 2025 թվականի ծրագիր

Բովանդակություն

Երևանի քաղաքապետի ուղերձ

1. Զարգացման առաջնահերթություններ
2. Քաղաքային պլանավորում և քաղաքաշինություն
3. Ենթակառուցվածքներ և շարժունակություն
4. Սոցիալական բարեկեցություն և մարդկային կապիտալ
5. Շրջակա միջավայր և կլիմայի գործողություններ
6. Խելացի քաղաք և թվային փոխակերպում
7. Ինստիտուցիոնալ բարեփոխումներ
8. Միջազգային գործընկերություն
9. Ֆինանսական ուրվագիծ
10. Ռազմավարական հաղորդակցություն և հանրային կապեր
11. Մոնիտորինգ, գնահատում և հաշվետվողականություն

Երևանի սիրելի՛ բնակիչներ,

Պատիվ ունեմ ներկայացնել 2025 թվականի Երևանի զարգացման ծրագիրը՝ մեր սիրելի քաղաքը դեպի ապագա տանող համարձակ օրակարգ, որի առանցքում նորարարության, արդիականացման ու մշակութային ժառանգության պահպանման յուրօրինակ ներդաշնակությունն է: Ծրագիրը քաղաքացիների հետ շարունակական երկխոսության ու հետադարձ կապի վերլուծության արդյունք է՝ արտացոլելով կարիքները, ձգտումներն ու հնարավորությունները:

Վերջին տարում նշանակալի աշխատանքներ ենք կատարել ու տեսանելի արդյունքներ ապահովել: Զգալի ներդրումների շնորհիվ բարելավել ենք քաղաքային ճանապարհները, կամուրջները և հասարակական տրանսպորտային համակարգը: Երևանի այգիներն ու հասարակական տարածքները վերակենդանացել են՝ ապահովելով յուրաքանչյուր տարիքի բնակչի համար հարմարվետ, կանաչ և առողջ միջավայր: Շրջադարձային նշանակություն ունեցող թվային համակարգեր ենք ներդրել՝ հիմքեր ձևավորելով տվյալահեն ու արդյունավետ քաղաքային կառավարման ու բնակիչներին թվային միջավայրում հարմարավետ ու անվտանգ ծառայություններ մատուցելու նպատակով: Մասշտաբային ծրագրեր են իրականացվում հանրային շենքերի էներգարդյունավետությունն ու սեյսմակայունությունն ապահովելու և բնակիչներին ավելի հարմարավետ պայմաններում սոցիալական ծառայություններ մատուցելու համար: Ուրախ եմ, որ հնարավոր եղավ լիովին նոր շունչ հաղորդել մայրաքաղաքի մշակութային ու սպորտային կյանքին: Այս շարքը երկար կարելի է շարունակել:

Ներկա արդյունքները, անշուշտ, ոգևորող են և վստահություն են հաղորդում առ այն, որ հնարավոր է ավելին, քանի որ դեռևս պահպանվում են մարտահրավերներն ու խնդիրները քաղաքային կյանքի բոլոր բնագավառներում, ու բազմաթիվ են անելիքները՝ մեր երազանքների քաղաքային միջավայրը ձևավորելու ճանապարհին: Եթե նախորդ ֆինանսական ու գործառնական տարին առավելապես խոշոր նախագծերի ու բարեփոխումների նախապատրաստման փուլ էր, ապա 2025 թվականի զարգացման ծրագիրը մեկնարկած նախաձեռնությունների դինամիկ իրագործման ու տարբեր ոլորտներում փորձարկված ծրագրերի մասշտաբայնացման հավակնոտ օրակարգ է:

Այս տարի առաջնահերթություն ենք տալու քաղաքային կենսամիջավայրի վերականգնմանն ու զարգացմանը՝ վթարային բնակելի ֆոնդի և հին ու անբարեկարգ բնակելի տարածքների վերականգնման ու արդիականացման, սոցիալական ենթակառուցվածքների էներգարդյունավետ ու սեյսմակայուն վերակառուցման, կանաչ տարածքների, քաղաքային զբոսայգիների ու բակային հատվածների բարեկարգման միջոցով: Առանձնահատուկ կարևորություն է ստանալու քաղաքային ենթակառուցվածքների զարգացման ու շարժունության Մեր թվային փոխակերպման մոտեցումը կգնա ավելի հեռու՝ ինտեգրելով առաջատար տեխնոլոգիաները ավելի խելացի քաղաքային կառավարման համար: Դրան ներառվելու են խելացի տրանսպորտային համակարգեր, անվտանգ թվային միջավայր՝ տվյալների պաշտպանվածությունն ու բնակիչների գաղտնիությունը երաշխավորելու համար: Երևանը հավակնում է դառնալ էլեկտրոնային կառավարման ազգային առաջատար, ինչը թույլ կտա մեր քաղաքացիներին ակտիվորեն մասնակցել որոշումների կայացման գործընթացում և անխափան օգտվել ծառայություններից:

Մեր հատուկ ուշադրությունն է երիտասարդությանը, սպորտին և մշակույթին՝ ինչպես որպես համայնքի ակտիվ ուժ, այնպես էլ որպես Երևանի անբաժան մաս: Սպորտային ենթակառուցվածքների զարգացումն առաջնահերթություն է մեզ համար, քանի որ մենք

ձգտում ենք խթանել առողջ ապրելակերպն ու ակտիվությունը: Նոր մարզասրահների, մարզադաշտերի և բացօթյա մարզահրապարակների կառուցմամբ մենք կստեղծենք պայմաններ, որտեղ բոլոր տարիքային խմբերի բնակիչները կարող են զբաղվել սպորտով և համախմբվել՝ ավելի առողջ և դինամիկ քաղաքի համար:

Մշակույթը մեր քաղաքի ոգին է, և մենք կշարունակենք աջակցել արվեստի բոլոր տեսակներին, թատերական և երաժշտական միջոցառումներին, որոնք ընդգծում են Երևանի հարուստ ժառանգությունն ու ինքնատիպությունը: Կապահովենք, որ մեր մշակութային տարածքները վերանորոգվեն և հասանելի լինեն բոլորին՝ դարձնելով Երևանը մշակութային հանգույց: Մեր նպատակն է ստեղծել միջավայր, որտեղ յուրաքանչյուր երևանցի կկարողանա բացահայտել իր տաղանդը, մասնակից դառնալ քաղաքի ստեղծագործական կյանքին:

Քաղաքային նախաձեռնությունների և մասնակցային կառավարման նախագծերի միջոցով մենք կխրախուսենք բնակիչների ակտիվ մասնակցությունը քաղաքային խնդիրների լուծմանը և հատկապես երիտասարդների ներգրավվածությունը քաղաքի ապագան կերտելու գործընթացում՝ ամրապնդելով նրանց դերակատարությունը համայնքում:

Ձեր վստահությունն ու համագործակցությունն առանցքային են Երևանի խելացի, կայուն, հարմարավետ, առողջ և դինամիկ ներկան ու ապագան կայացնելու ճանապարհին:

Տիգրան Ավինյան

Երևանի քաղաքապետ

1. Քաղաքային պլանավորում և քաղաքաշինություն

Երևանի զարգացման 2025 ծրագիրը նպատակ ունի օրգանական շարունակություն ապահովել քաղաքի վերափոխման ուղղությամբ մեկնարկած ջանքերը՝ ուղղված ավելի անվտանգ, կանաչ, կլիմայի փոփոխության ազդեցությունների հանդեպ դիմակայուն, ժամանակակից միջավայրի ստեղծմանը: Մեկնարկելու են մի շարք խոշոր նախաձեռնություններ, որոնք կխթանեն քաղաքային տարածքների վերակառուցումը, կենսամիջավայրի բարելավումը և քաղաքի սեյսմիկ դիմակայունության ամրապնդումը:

Քաղաքային զարգացման ու քաղաքաշինական պլանավորման ոլորտում ջանքները կենտրոնանալու են նախևառաջ Երևանի նոր գլխավոր հատակագծի բարելավման, այդ բնագավառում որոշումների կայացման ու ծառայությունների մատուցման համար թվային համակարգերի ներդրման, քաղաքաշինական մի շարք առանցքային ներդրումային ծրագրերի մեկնարկի ու վթարային բնակելի ֆոնդի վերականգնման ուղղությամբ:

Մասնավորապես, ապահովվելու է Երևան քաղաքի նոր գլխավոր հատակագծի նախագծի թվայնացումը՝ նպատակ ունենալով կազմակերպել դրա համապարփակ վերլուծությունը և տարածական պլանավորման նոր ուղղությունները: Այս գործընթացում կարևորվելու են աշխատակիցների վերապատրաստումը GIS համակարգի շահագործման և առկա գլխավոր հատակագծի նյութերի ինտեգրաման գործում, գլխավոր հատակագծի ինտեգրումը թվային GIS համակարգում՝ արդյունքում ապահովելով ճշգրտված ելակետային նյութերի հավաքագրում և դրանց հիման վրա փաստացի վիճակի վերլուծություն և այլն: Այս աշխատանքները թույլ կտան հավաքագրված ամբողջական ու արժանահավատ տվյալների հիման մեկնարկել քաղաքաշինական նոր ռազմավարության մշակման գործընթացը:

Նորագյուղ թաղամասի վերականգնումը Երևանի զարգացման ծրագրի առանցքային բաղադրիչներից է՝ նպատակ ունենալով վերափոխել այս պատմական թաղամասը ժամանակակից և բնակիչների համար հարմարավետ վայրի: Ծրագրի շրջանակներում կկառուցվեն նոր բնակելի շենքեր, կներդրվեն կանաչ տարածքներ և հանրային տարածքներ՝ բարելավելով բնակիչների կյանքի որակը:

Կասկադ համալիրը Երևանի խորհրդանիշներից մեկն է և հանդիսանում է զբոսաշրջային ու մշակութային կարևոր կենտրոն: Ջանքեր կներդրվեն Կասկադ համալիրի ամբողջական կառուցման ուղղությամբ՝ ներգրավելով նաև մասնավոր ներդրումներ:

Երևանի սեյսմիկ վտանգավոր գոտում գտնվելու պատճառով առաջնահերթություն է բնակելի շենքերի սեյսմիկ դիմակայունության բարձրացումը: Այս նախաձեռնության նպատակն է վերականգնել և ամրացնել այն բազմաբնակարան շենքերը, որոնք խոցելի են սեյսմիկ ռիսկերից: Այս ուղղությամբ ոչ միայն կապահովվեն արդեն իսկ ընտրված մի շարք վթարային շենքերի վերակառուցման աշխատանքները, այլև՝ հայեցակարգային հիմքեր կձևավորվեն ռենովացիայի համապարփակ ծրագրի մշակման ու կենսունակ մոդելի ներդրման ուղղությամբ:

2. Ենթակառուցվածքներ և շարժունակություն

Երևանի ճանապարհային ենթակառուցվածքների բարելավումը զարգացման ծրագրի առաջնահերթություններից է՝ նպատակ ունենալով ստեղծել արդյունավետ, արդի և կայուն քաղաքային տրանսպորտային ցանց: Ճանապարհների վերակառուցման, ընդլայնման և

արդիականացման ոլորտում ներդրումների միջոցով կբարելավվի երթևեկության հոսքը, կնվազեցվեն խցանումները, կբարձրացվի անվտանգության մակարդակը և կապահովվի քաղաքի երկարաժամկետ տնտեսական և բնապահպանական կայունությանը:

Առկա ճանապարհների հիմնանորոգման ու բարեկարգման հետ զուգահեռ նախատեսվում է նոր ճանապարհների ու կամուրջների կառուցում և նոր ներդրումային ծրագրերի նախապատրաստում: Երկարաժամկետ կայունությունն ու անվտանգությունը ապահովելու համար իրականացվելու են լայնածավալ վերանորոգման և ասֆալտապատման աշխատանքներ, որը կներառի մաշված ճանապարհների վերականգնում և փոսերի լցնում: Կայունությանն ու ակտիվ ապրելակերպին նպաստելու շրջանակում կբարելավվեն հետիոտնային ուղիներն ու կձևավորվեն հեծանվային ուղիներ: Ճանապարհային անվտանգության նպատակով կիրականացվեն գծանշումների, լուսավորության բարելավման և հետիոտնային անցումների արդիականացման միջոցառումներ: Հատուկ ուշադրություն կդարձվի նաև հաշմանդամություն ունեցող անձանց և տարեցների համար մատչելիության խնդրին:

Հասարակական տրանսպորտի համակարգային բարեփոխումը քաղաքային զարգացման առանցքային հարցերից է: Վերջին տարիներին շարունակական ջանք և ռեսուրս է ներդրվել՝ բարելավելու շարժակազմն ու սպասարկող ենթակառուցվածքը, զարգացնելու երթուղային ցանցը, ներդրնելու միասնական տոմսային համակարգ և թվային լուծումներ, ինչպես նաև՝ անցում կատարելու սակագնային նոր մոդելին՝ համակարգի արդյունավետ կառավարումն ու երկարաժամկետում դրա ֆինանսական կայունությունն ապահովելու համար: Չնայած նկատելի արդյունքներին, առկա են էական մարտահրավերներ: Ճանապարհային ծանրաբեռնվածությունը դետևս մեծ խնդիր է՝ պայմանավորված մասնավոր տրանսպորտային միջոցների թվի աճով: Միասնական տոմսային համակարգի և իրական ժամանակի հետևման ներդրումը ընթացքի մեջ է: Ավարտուն չէ շարժակազմի արդիականացման գործընթացը: Ոլորտի ֆինանսական առողջության, երկրաժամկետ կենսունակության ու ինքնաբավության ուղղությամբ զգալի անելիքներ կան:

Քաղաքային տրանսպորտի ոլորտում Երևանի ռազմավարական նպատակը հուսալի, անվտանգ, էկոլոգիապես մաքուր, հարմարավետ, տեղաշարժման օպտիմալ ժամանակով և ճկուն ուղևորափոխադրումներ ապահովող մուլտիմոդալ համակարգի ու երթուղային ցանցի զարգացումն է՝ տվյալահեն որոշումների կայացման, տեխնոլոգիապես հագեցած կառավարման ու կենսունակ ֆինանսական մոդելով: 2025 թվականին տրանսպորտի ոլորտում հիմնական գործողությունները կենտրոնանալու են հետևյալի շուրջ՝

- ներդրվելու է Երևանի հանրային տրանսպորտի նոր երթուղային ցանց՝ վերանայելով առկա երթուղիները և ձևավորելով միասնական համակարգ,
- ավարտին է հասցվելու միասնական տոմսային էլեկտրոնային համակարգի ամբողջական ներդնումը, նոր սակագնային համակարգին անցման շրջանակներում ներդրվելու է զեղչային համակարգ թիրախային խմբերի համար,
- ապահովվելու են անհրաժեշտ աշխատանքներ էլեկտրական և էկոլոգիապես մաքուր հատուկ մեծ դասի (18 մետր երկարությամբ) համակցված մինչև 249 ավտոբուսների ձեռքբերման և դեպոյի արդիականացման ծրագրի իրականացման համար,
- ապահովվելու են տրոլեյբուսների շարժակազմը շարժման ընթացքում լիցքավորվող 71 տրոլեյբուսի ձեռքբերման աշխատանքները,

- արդիականացվելու է կանգառասրահների ցանցը՝ տեղադրելով 500 կանգառասրահ և առկա սրահներում տեղադրվելու են թվով 800 ցուցատախտակներ:

Երևանի մետրոպոլիտենի զարգացման ու արդիականացման ուղղությամբ հիմնական գործողություններն ու ծրագրերը ներառելու են հետևյալը.

- Աջափնյակ վարչական շրջանում մետրոպոլիտենի նոր կայարանի (պայմանական՝ «Աջափնյակ») կառուցման ծրագիրը մտնելու է ակտիվ իրագործման փուլ, տրվելու է շինարարական աշխատանքների մեկնարկը՝ ըստ ֆինանսավորման շուրջ ՀՀ կառավարության և միջազգային գործընկերների հետ բանակցության արդյունքների.
- մեկնարկելու են մետրոպոլիտենի «Զորավար Անդրանիկ» և «Սասունցի Դավիթ» կայարանների միջանկյալ հատվածում նոր վերգետնյա կայարանի (պայմանական՝ Սուրմալու) կառուցման ուղղությամբ գործնական քայլերը, մասնավորապես՝ դրա տեխնիկատնտեսական հիմնավորման, նախագծային փաստաթղթերի մշակման, հանրային ներդրումային ծրագրի հաստատման ու ֆինանսավորման հատկացման աշխատանքները.
- Ավարտին է հասցվելու Երևանի մետրոպոլիտենի արդիականացման ներդրումային ծրագրի բանակցային գործընթացը, այդ թվում՝ ՀՀ կառավարության հետ ծրագրի շրջանակի ու ֆինանսավորման մեխանիզմի շուրջ համաձայնության ձեռքբերումն ու տրվելու է ներդրումային ծրագրի իրականացման մեկնարկը:

3. Սոցիալական բարեկեցություն և մարդկային կապիտալ

Երևանի զարգացման 2025 թվականի ծրագիրը նպատակ ունի շարունակել ներդրումները սոցիալական ապահովության և մարդկային կապիտալի ոլորտում՝ ստեղծելով առողջ, կրթված և սոցիալապես բարեկեցիկ համայնք: Նպատակն է բարելավել կրթության, առողջապահության, մշակույթի, սպորտի և երիտասարդության ոլորտները՝ ապահովելով ամենաբարձր որակի ծառայություններ՝ ի նպաստ համայնքի բնակիչների բարօրության:

Որպես մարդկային կապիտալի զարգացման հիմք՝ կշարունակվեն համայքում կրթության որակի և հասանելիության բարելավման, մանկապարտեզներում հարմարավետ միջավայրի ձևավորման, ուսումնական անձնակազմերի կարողությունների զարգացման միջոցառումները:

Գերակայություն է բարձրորակ առողջապահական ծառայությունների հասանելիությունը: Կվերակառուցվեն և կհամալրվեն հիվանդանոցները և պոլիկլինիկաներն արդիական սարքավորումներով: Հատուկ ուշադրություն կդարձվի կանխարգելիչ բժշկությանը՝ առողջության պահպանման համար սքրինինգ ծրագրերի և հանրային իրազեկման միջոցառումների միջոցով: Նպատակն է՝ ստեղծել մատչելի, հարմարավետ և համընդհանուր առողջապահական համակարգ, որը կծառայի բոլոր երևանցիներին՝ անկախ սոցիալական և տնտեսական կարգավիճակից: Առողջապահական համակարգի կառավարման արդյունավետության նպատակով և Երևան քաղաքի բնակչությանը մատուցվող բժշկական ծառայությունների որակի բարձրացման և հասանելիության, համակարգի արդիականացման համար կարևոր խնդիր է բուժհաստատությունների հագեցվածությունը, վերազինումը և վերանորոգումը: Քաղաքի բուժհաստատությունները հագեցված են անհրաժեշտ բժշկական սարքավորումներով, սակայն ժամանակակից պահանջներին համաձայն անհրաժեշտություն է առաջանում բուժհաստատությունների

վերազինումը նոր սարքավորումներով: Շարունակական բնույթ է կրելու բնակչությանը դժվարամատչելի հետազոտությունների և ծառայությունների տրամադրումը: Շտապբուժօգնության արդիականացման շրջանակներում շարժական ուժն անհաժեշտ է համալրել լրացուցիչ տրանսպորտային միջոցներով և սարքավորումներով:

Մշակույթը մեր քաղաքի հոգին է, և հանձնառու ենք ներդրումներ ապահովել մշակութային ժառանգության պահպանման և նորարարական նախաձեռնությունների խթանման ուղղությամբ: Թանգարանները, թատրոնները և մշակութային կենտրոնները կվերանորոգվեն և կհամալրվեն՝ դարձնելով դրանք հասանելի բոլորի համար: Հատուկ ծրագրեր կկազմակերպվեն երիտասարդ ստեղծագործողների, նկարիչների և երաժիշտների աջակցելու համար՝ մշակութային կյանքը զարգացնելու նպատակով: Ձգտելու ենք Երևանը դարձնել տարածաշրջանային մշակութային հանգույց՝ հագեցած բացառիկ և դինամիկ միջազգային միջոցառումներով և փառատոններով:

Սպորտը կարևոր բաղադրիչ է առողջ հասարակության համար: Կշարունակենք ներդրումներ իրականացնել այս բնագավառում՝ զարգացնելով քաղաքի մարզական ենթակառուցվածքները՝ կառուցելով նոր մարզասրահներ, մարզադաշտեր և բացօթյա մարզահրապարակներ: Հատուկ ծրագրեր կկազմակերպվեն երեխաների և երիտասարդների համար՝ նրանց խրախուսելով զբաղվել սպորտով և ֆիզիկական ակտիվությամբ: Նպատակներից է նաև խթանել պարալիմպիկ սպորտը՝ ստեղծելով մատչելի պայմաններ բոլորի համար, ներառյալ՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար: Երևան համայնքի ենթակայությամբ գործող մարզական կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով կշարունակվի մարզադպրոցների ժամանակակից մարզագույքով ապահովումը: Կկառուցվի Ալբերտ Ազարյանի անվան միջազգային նոր մանկապատանեկան մարզադպրոցը, Երևան քաղաքի մենապայքարային մարզաձևերի բարձրագույն վարպետության մարզադպրոցը, ինչը հնարավորություն կտա մեր հավաքականների հաջողությունները ամրապնդել և զարգացնել, Երևանի թենիսի ակադեմիան: Էրեբունի և Շենգավիթ վարչական շրջաններում առկա հին լողավազանները հիմնովին կվերանորոգվեն՝ արդյունքում ձևավորելով Երևան քաղաքի ջրային մարզաձևերի մարզադպրոցը: Առողջ ապրելակերպի արմատավորման ու ներդաշնակ ֆիզիկական զարգացման իրականացման, մայրաքաղաքում տարբեր մարզաձևերի մասսայականացման և զարգացման նպատակով կկազմակերպվեն բազմաթիվ մարզական միջոցառումներ, որոնք կներառեն նաև հաշմանդամություն ունեցող անձանց հետ անցկացվող միջոցառումներ: Կշարունակվեն Երևան քաղաքում ամենամյա միջազգային մրցաշարերը մի շարք մարզաձևերով: Արտադպրոցական դաստիարակության միջոցով կշարունակվի երիտասարդ սերնդի շրջանում առողջ ապրելակերպի խթանումը: Ամենամյա կտրվածքով Երևան քաղաքում կանցկացվի «Երևանյան վազք» միջազգային վազքի մրցաշարը: Կիրականացվի լավագույն մարզիկների տարեվերջյան միանվագ պարգևատրում, որը խթան կհանդիսանա Եվրոպայի և աշխարհի առաջնություններին, ինչպես նաև օլիմպիական խաղերին լավագույնս նախապատրաստվելուն:

Երևանի զարգացման ծրագիրը ներառում է նաև սոցիալական ապահովության համակարգի բարելավում՝ աջակցելու խոցելի խմբերին, տարեցներին, երեխաներին և հաշմանդամություն ունեցող անձանց: Կստեղծվեն սոցիալական կենտրոններ և ծառայություններ՝ տրամադրելով խորհրդատվություն, վերապատրաստում և աջակցություն նրանց, ովքեր առավել շատ կարիքն ունեն: Նպատակն է ապահովել, որ

Երևանի յուրաքանչյուր բնակիչ ունենա քաղաքային կյանքին լիարժեք մասնակցության հնարավորություն:

4. Շրջակա միջավայր և կլիմայի գործողություններ

Երևանի զարգացման 2025 ծրագիրը ընդգրկում է կայուն զարգացման և բնապահպանական պաշտպանության ուղղությամբ համապարփակ միջոցառումներ: Մեր նպատակն է՝ վերածել Երևանը կանաչ, մաքուր և կլիմայական դիմացկուն քաղաքի, որտեղ յուրաքանչյուր բնակիչ կունենա ավելի առողջ ու հաճելի միջավայր: Այս նպատակով նախաձեռնություններն ուղղված կլինեն շրջակա միջավայրի պահպանմանը, ածխաթթվային արտանետումների կրճատմանը և կայուն կենսակերպի խթանմանը:

Կանաչ տարածքները կարևոր են մեր քաղաքի բնակիչների առողջության և բարօրության համար: Նախատեսում ենք ստեղծել նոր զբոսայգիներ, այգիներ և կանաչ գոտիներ՝ ընդգրկելով ինչպես կենտրոնական թաղամասերը, այնպես էլ ծայրամասային տարածքները: Գոյություն ունեցող այգիները կվերանորոգվեն և կզարգացվեն՝ ապահովելով հարմարավետ հանգստի պայմաններ ամեն տարիքի բնակիչների համար: Հատուկ ուշադրություն կդարձվի ծառատնկման և քաղաքային կանաչապատման ծրագրերին՝ կլիմայի փոփոխության դեմ պայքարի շրջանակում:

Էներգիայի սպառման արդյունավետությունը մեր առաջնահերթություններից է: Այս մասով կբարելավվել հանրային շենքերի էներգաարդյունավետությունը՝ անցում կատարելով կանաչ տեխնոլոգիաների և էներգախնայող սարքավորումների օգտագործմանը: Կխթանվի արևային վահանակների ու հորիզոնական այլ միջոցառումների իրականացումը, ինչը կնվազեցնի Երևանի ածխաթթվային հետքը և կնպաստի էներգետիկ անկախությանը:

Մաքուր և առողջ Երևան ունենալու համար ներդրումներ կիրականացվեն ժամանակակից թափոնների կառավարման համակարգերի ձևավորման մեջ: Ջանքեր կներդրվեն վերամշակման կենտրոնի կառուցման ուղղությամբ, աղբի տեսակավորման գործընթացը կդառնա ավելի հասանելի և խրախուսելի: Կկազմակերպվեն իրազեկման արշավներ՝ վերամշակման և թափոնների նվազեցման մշակույթ ձևավորելու նպատակով:

Կլիմայական փոփոխությունների ազդեցության դիմակայունությունը բարձրացնելու նպատակով կարևորվում են հարմարվողականության ծրագրերը, ինչը ներառում է ի թիվս այլոց նաև ջրահեռացման համակարգերի բարելավումը և ենթակառուցվածքների արդիականացումը:

Շրջակա միջավայրի պաշտպանության և կայուն զարգացման նպատակով ուշադրություն կդարձնենք հանրային իրազեկման և կրթության վրա: Կկազմակերպվեն միջոցառումներ, սեմինարներ և քարոզարշավներ՝ խթանելով էկոլոգիապես գիտակցված վարքագիծ:

5. Խելացի քաղաք և թվային փոխակերպում

Երևան քաղաքում կառուցապատման, տրանսպորտի, արտադրությունների և ծառայությունների օրեցօր ավելացումը, տեղեկատվության փոխանակման ծավալների և արագության նոր պահանջները և, ընդհանրապես, քաղաքային կյանքի ինտենսիվության

բարձրացումը նոր խնդիրներ են առաջ բերում, որոնց լուծման համար անհրաժեշտ են նորարարական մոտեցումներ: Բարեբախտաբար, տեխնոլոգիաների դարաշրջանը ստեղծվող խնդիրներին զուգահեռ ծնում է նաև դրանց խելացի լուծումները:

Երևանի քաղաքապետարանը քաղաքային տնտեսության բազմաթիվ ոլորտներ արդեն իսկ թվայնացրել է, ավտոմատացրել է գործառույթները, ներդրել կառավարման, վերահսկման, տեղեկատվական և անվտանգության համակարգեր: Այսօր Երևան քաղաքապետարանի կողմից տրամադրվող ծառայությունների գերակշիռ մասը մեր քաղաքացիները կարողանում են ստանալ նաև էլեկտրոնային եղանակով՝ www.yerevan.am պաշտոնական կայքից:

Ժամանակի պահանջներին համահունչ զարգացման, քաղաքի դիմակայության և անվտանգության բարձրացման, ռեսուրսների խնայողության, էկոհամակարգի բարելավման, տարածաշրջանում ներդրումներ ներգրավելու մրցակցությունում առավելություն ստանալու համար ստեղծվել է Քաղաքապետին կից Թվային փոխակերպման խորհուրդ, որն էլ հաստատել է Թվային փոխակերպման ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը:

Ռազմավարությունն ընդգրկում է զարգացում՝ 5 հիմնական ուղղություններ.

- էլեկտրոնային կառավարման բարելավում (Smart Governance)
- Անվտանգություն բարելավում (Safe City)
- էկոլոգիայի բարելավում (Green city)
- Քաղաքային շարժունակության բարելավում (Mobility)
- Փոխգործակցության և թվային ենթակառուցվածքների զարգացում (Smart Environment)

2025 թվականին նախատեսվում է ապահովել Երևանի քաղաքապետարանի թվային փոխակերպման ռազմավարությամբ սահմանված առաջնահերթ համարված նախագիծերի իրականացում, ինչը ներառում է.

- Ներդնել ներքին գործառույթների ավտոմատացման համակարգեր
- Ապահովել քաղաքային ծառայությունների էլեկտրոնային եղանակով տրամադրում
- Մեծացնել կառավարման թափանցիկությունը, արդյունավետությունը հաշվետվողականությունը, ճկունությունը և ավելացնել բյուջետային մուտքերը
- Ներդնել տվյալների տարածական վերլուծության համակարգեր, որոնք կապահովեն տվյալահեն որոշումների ընդունումը

Ոլորտի զարգացման հիմնական նպատակադրված արդյունքներն են՝

- «YES platform» Երևանի էլեկտրոնային ծառայությունների միասնական հարթակի գործարկում, որը նպատակ ունի ապահովել քաղաքային ծառայությունների միասնական միջավայր և դրանք էլեկտրանային տրամադրել քաղաքացուն: Այն նախատեսում է տարատեսակ համակարգերում քաղաքացու միասնական օգտահաշիվ և կատարված գործարքների պատմություն: Համակարգը պետք է հենված լինի միասնական ֆինանսական հաշվի համակարգի վրա և քաղաքացու պարտավորությունները մարի ինքնաշխատ դեպի մեկ հաշիվ սկզբունքով:

- «Twin city» քաղաքի թվային կրկօրինակի ստեղծում, ինչը ենթադրում է քաղաքային ենթակառուցվածքների և դրանց տարածական նկարագրերի թվայնացում, զետեղում մեկ տարածատեղեկատվական GIS միջավայր, որտեղ հնարավորություն է ընձեռվելու ավտոմատացնել գործառույթները և կատարել տարածական վերլուծություններ:

Ծրագրի իրականացման արդյունքում ակընկալվում է՝

- քաղաքացիների կողմից թղթային դիմումների ծավալը 67%-ից դարձնել 10%-ի
- ավելացնել համայքային եկամուտները
- բարձրացնել քաղաքացու գոհունակությունը
- նորարար տեխնոլոգիաների կիրառմամբ ապահովել տվյալահեն որոշումներ

Այս ոլորտում առավելագույն ռիսկեր կարելի է նշել թվայնացման արդյունքում առաջացող կիբեր անվտանգության ռիսկերը, այս ոլորտի զարգացմամբ պայմանավորված նեղ մասնագետների պահանջարկի բարձրացման հետևանքով կադրերի ներգրավումը, նախագծի իրականացման ընթացքում ֆինանսավորման նվազեցումը կամ դադարեցումը:

6. Ինստիտուցիոնալ զարգացում

Երևանի զարգացման 2025 ծրագիրը ներառում է ինստիտուցիոնալ բարեփոխումների համապարփակ ծրագիր, որն ուղղված է քաղաքի կառավարման արդյունավետության բարձրացմանը և համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանն աջակցելուն: Այս բարեփոխումները կկայունացնեն քաղաքային կառավարման համակարգը, կհամալրեն բնակելի շենքերի կառավարման մեխանիզմները և կխթանեն ֆինանսական ռեսուրսների ավելի արդյունավետ պլանավորումն ու օգտագործումը:

Երևանի զարգացման ծրագրի առանցքային և հիմնարար նշանակություն ունեցող նախաձեռնություններից է Երևանի տեղական ինքնակառավարման մասին օրենսդրական փաթեթի ընդունումը, որի միջոցով կվերակազմակերպեն քաղաքի կառավարման ինստիտուցիոնալ հիմքերը: Այն միտված է ապահովել ավելի մեծ ինքնավարություն և պատասխանատվություն քաղաքային իշխանությունների համար՝ խթանելով թափանցիկությունն ու հաշվետվողականությունը: Օրենքի միջոցով կամրապնդվի Երևանի համայնքային կառավարումը՝ հնարավորություն տալով քաղաքային իշխանություններին ավելի արդյունավետ իրականացնել իրենց գործառույթները և բնակիչներին ավելի որակյալ ծառայություններ մատուցել:

Մեկ այլ հիմնարար և լուծում պահանջող խնդիրներից է բնակելի շենքերի կառավարման արդյունավետությունը: Կմշակվի բազմաբնակարան շենքերի կառավարման նոր մոդել, որը կնախատեսի համատիրությունների կամ մասնավոր կառավարման ընկերությունների միջոցով ավելի արդյունավետ կառավարման մեխանիզմների ներդրում՝ նպատակ ունենալով բարձրացնել բնակելի շենքերի սպասարկման որակը և խթանել ընդհանուր սեփականության պահպանման մշակույթը:

Երևանի ֆինանսական կառավարումն ավելի արդյունավետ դարձնելու համար նախատեսում ենք անցում կատարել ծրագրային բյուջետավորմանը: Այս մոտեցումը թույլ կտա կենտրոնանալ ոչ միայն ֆինանսական ծախսերի վրա, այլև ծրագրերի արդյունքների և ազդեցության գնահատման վրա: Ծրագրային բյուջետավորման միջոցով ապահովվի

ֆինանսական ռեսուրսների նպատակային և արդյունավետ պլանավորում և օգտագործումը՝ հիմնվելով նախապես սահմանված ռազմավարական նպատակների և արդյունքամետ ցուցանիշների վրա: Սա կնպաստի քաղաքի զարգացման առաջնահերթությունների ավելի հստակ սահմանմանը և ֆինանսական ծախսերի կառավարման թափանցիկության բարձրացմանը:

Ինստիտուցիոնալ բարեփոխումների կարևոր բաղադրիչ է հանրային ներգրավվածության խթանումը: Քաղաքի բնակիչներին հնարավորություն կտրվի մասնակցել քաղաքային ծրագրերի պլանավորմանը, բյուջետավորմանը և գնահատմանը: Այս նպատակով կկազմակերպվեն հանրային քննարկումներ, առցանց հարցումներ և հանրային լսումներ՝ խթանելու մասնակցային կառավարումը:

7. Միջազգային գործընկերություն

Երևանի քաղաքի միջազգային համագործակցության հիմնական նպատակն է բարձրացնել Երևանի հանրաճանաչելիությունը, ներգրավել օտարերկրյա ներդրումներ, նպաստել առաջատար փորձի ներդրման ու աջակցել զբոսաշրջության զարգացմանը: Միջազգային համագործակցությունը պետք է գործնականում նպաստի Երևանի զարգացման ծրագրերով նախատեսված ծրագրային նպատակների իրականացմանը՝ «մշակութային քաղաք», «սպորտի և երիտասարդության քաղաք», «կայուն զարգացման քաղաք», «տնտեսական զարգացման քաղաք», «խելացի և նորարար քաղաք» և զբոսաշրջային քաղաք»»:

Ներկա դրությամբ ինստիտուցիոնալ համագործակցություն է հաստատված 54 քույր և գործընկեր քաղաքների, 8 միջազգային կազմակերպությունների հետ: Վերջին 3 տարում ստորագրվել են համագործակցության համաձայնագրեր Թեհրանի, Հռոմի և Ցինդաոյի հետ: Եռամյա ծրագիր է իրականացվում Ֆրանսիայի Իլ դը Ֆրանս շրջանի հետ:

Ռազմավարությունն ուղղված է հիմնականում համագործակցությունը կենտրոնացնել խոշոր գործընկեր քաղաքների և միջազգային կառույցների հետ՝ շեշտը դնելով երկարաժամկետ կոնկրետ համագործակցության ծրագրերի վրա (2-3 տարվա համար)՝ Իլ դը Ֆրանս շրջանի հետ համագործակցության մոդելով: Միջազգային այն կազմակերպությունների հետ համագործակցության խորացում, որոնց անդամակցում է Երևանը և որոնք հեռանկարային են և գրավիչ առարկայական ռեսուրսների և ներդրումների առումով:

Ռազմավարական առումով աշխատանքներ կիարկանացվեն Արաբական թերակղզու մայրաքաղաքների, հարավային և հյուսիսային Աֆրիկայի խոշոր քաղաքների հետ, ԱՄՆ-ի, Կանադայի, Չինաստանի ռեգիոնների և քաղաքների հետ համագործակցության հաստատման առումով:

Ռազմավարական առումով համագործակցույուն կիրականցվի Թեհրանի և Թբիլիսիի հետ՝ որպես հարևան երկրների մայրաքաղաքներ:

2025 թվականի առաջնահերթությունն է առնվազն 4-5 խոշոր քաղաքների՝ Թեհրան, Հռոմ, Սիչուան նահանգ, Լիոն, հետ ծրագրային համագործակցության ձևավորումը և Դուբայի, Էլ-Ռիադի, Լոնդոնի հետ կապերի հաստատումը:

8. Ռազմավարական հաղորդակցություն և հանրային կապեր

Երևանի զարգացման 2025 ծրագիրը հաջողությամբ իրականացնելու և բնակիչների, շահագրգիռ կողմերի և գործընկերների աջակցությունն ապահովելու համար չափազանց կարևոր են ռազմավարական հաղորդակցությունն ու հանրային կապերը՝ նպատակ ունենալով փոխվստահելի միջավայր ձևավորել քաղաքային իշխանության ու համայնքի բնակչության միջև՝ խթանելով թափանցիկություն, վստահություն և բնակիչների ակտիվ մասնակցությունը:

Մեր առաջնահերթություններից է լինելու բնակիչներին Երևանի զարգացման ծրագրի նախաձեռնությունների և ակնկալվող արդյունքների մասին պարբերական իրազեկումն ինչպես ավանդական լրատվամիջոցների՝ հեռուստատեսություն, ռադիո և տպագիր մամուլ, այնպես էլ թվային հարթակների՝ սոցիալական ցանցեր, քաղաքի պաշտոնական կայք միջոցով: Մշտական թարմացումների և տեղեկատվական նյութերի միջոցով բնակիչները կտեղեկացվեն նախագծերի ու արդյուքնների մասին:

Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների տարեկան ծրագրերը հանրության շրջանում հնարավորին մեծ ծավալով ապահովելու նկատառումով լրատվական արտադրանքը կիրապարակվի Երևանի քաղաքապետարանի՝ Yerevan.am պաշտոնական կայքում, Facebook, Instagram, Telegram սոցիալական ցանցերի գերատեսչական էջերում, իսկ խոշոր ծրագրերին առնչվող նյութերը տարածվում են ԶԼՄ-ների էլ. փոստերին:

Բացի այդ, շաբաթական կտրվածքով «Երևան» հաղորդաշարի տեսքով կշարունակվի հեռարձակվել Հանրային հեռուստաընկերության եթերում: 2025 թվականին ավելի արագ, արդյունավետ ու տեխնիկական արդի պահանջներին համապատասխան լուսաբանում ապահովելու նպատակով կապահովվի տեխնիկական նոր միջոցներով համալրում:

9. Ֆինանսական ուրվագիծ

Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի նախագծում եկամուտների ընդհանուր գումարը նախատեսվել է 159,399,554.2 հազ. դրամ, իսկ 2024 թվականի հաստատված բյուջեն եկամուտների գծով կազմում է 124,639,373.4 հազ. ՀՀ դրամ: Նախագծով նախատեսված եկամուտների ընդհանուր ծավալում սեփական եկամուտները կազմում են 90,234,059.9 հազ. դրամ (տե՛ս գծապատկեր 1):

Գծապատկեր 1. Երևան քաղաքի սեփական եկամուտների դինամիկան 2021-2025 թթ.



Նախագծով ծախսերի ծավալը ծրագրվել է 159,487,359.7 հազ. դրամի չափով, իսկ 2024 թվականի հաստատված բյուջեն ծախսերի գծով կազմում է 124,917,826.1 հազ. ՀՀ դրամ:

Երևան քաղաքի բյուջեի ցուցանիշները 2022-2025 թթ.[1]



[1] 2025 թվականի ցուցանիշների համար հիմք է հանդիսանում Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեի վերաբերյալ ավագանու որոշման նախագիծը

1	Բյուջեի եկամուտները, հազ. դրամ	
2	Բյուջեի ծախսերը, հազար դրամ	
3	Սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր եկամուտների մեջ, %	

5	Բնակչության մեկ շնչին ընկնող բյուջետային եկամուտը, հազ. դրամ	
6	Բնակչության մեկ շնչին ընկնող բյուջետային ծախսը, հազ. դրամ	
7	Բնակչության մեկ շնչին ընկնող սեփական եկամուտը, հազ. դրամ	

Երևան քաղաքի 2025-2027թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրով սկիզբ դրվեց Երևան քաղաքի ֆինանսական համակարգի բարեփոխումների գործընթացին, մասնավորապես,

հաշվի առնելով բյուջետավորման արդի պահանջները՝ Երևանի քաղաքապետարանը նախաձեռնեց և առաջին անգամ անցում կատարեց ծախսային բյուջետավորումից դեպի ծրագրային մեթոդաբանությամբ բյուջետավորման:

Նման մեթոդաբանությամբ բյուջետավորումն իր տեղն է գտել նաև 2025 թվականի բյուջեի նախագծում, որը հանդիսանում է քաղաքային զարգացման ծրագրերի տարեկան ֆինանսավորման գլխավոր ուղղորդիչը: Ուղերձին կից փաստաթղթերի տեսքով ներկայացվում է Երևան քաղաքի 2025 թվականի բյուջեն՝ հիմնված ծրագրային բյուջետավորման ձևաչափի և չափանիշների վրա, որոնք համապարփակ տեղեկատվություն են տրամադրում ֆինանսական ռեսուրսների ուղղորդման նպատակների և արդյունքների վերաբերյալ: Բյուջեի կազմումը նման եղանակով համահունչ է «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքով սահմանված բյուջետային համակարգի սկզբունքներին: Մանավորապես, այն նպատակ է հետապնդում բարձրացնել Երևան քաղաքի ֆինանսների կառավարման համակարգի թափանցիկությունը և արդյունավետությունը, ինչը կօգնի ներդաշնակեցնել ծախսային քաղաքականությունը, միջնաժամկետ ծախսերի և հնգամյա զարգացման ծրագրերը մեկ միասնական փաստաթղթում՝ ապահովելով ռեսուրսների բաշխման արդյունավետությունը:

10. Մոնիտորինգ, գնահատում և հաշվետվողականություն

Երևանի զարգացման 2025 թվականի ծրագրի և դրանից բխող առանձին ծրագրերի ու բարեփոխումների արդյունավետ իրագործման նպատակով քաղաքապետարանում կմշակվի և կներդրվի զարգացման և ներդրումային ծրագրերի մոնիտորինգի, գնահատման և հաշվետվողականության ինստիտուցիոնալ մեխանիզմ և շրջանակ: Նպատակը նախաձեռնությունների հաշվետվողականության, թափանցիկության ու արդյունավետ առաջընթացի երաշխավորումն է՝ որդեգրելով քաղաքային կառավարման ոլորտում արդյունքամետ պլանավորման ու կառավարման սկզբունքները:

Մշտադիտարկումը կանցկացվի ծրագրերի իրականացման բոլոր փուլերում՝ ապահովելու, որ բոլոր նախաձեռնություններն իրականացվեն համաձայն պլանների և ժամկետների: Ծրագրի համար կսահմանվեն հիմնական արդյունքային ցուցանիշներ և պարբերական առաջընթացի հաշվետվություններ կներկայացվեն ծրագրերի թիմերի կողմից: Այս պարբերական հսկողությունը թույլ կտա կանխատեսել հնարավոր խնդիրները և արագորեն համապատասխան գործողություններ ձեռնարկել:

Ծրագրի արդյունավետությունը գնահատելու նպատակով կկազմակերպվեն միջանկյալ և եզրափակիչ գնահատումներ: Դրանք նպատակ կունենան վերլուծել ծրագրերի արդյունավետությունը՝ ելնելով նախապես սահմանված նպատակներից: Գնահատումը նաև կիրականացվի անկախ կողմերի ներգրավմամբ, որոնց առաջարկությունները կօգնեն շարունակաբար կատարելագործել ծրագրերի իրականացման ընթացքը և ապահովել ապագա ծրագրերի համար առավել արդյունավետ մեթոդներ:

Հաշվետվողականության բարձրացման և համայնքի վստահության ամրապնդման համար կկազմակերպվեն պարբերական հրապարակային հաշվետվություններ: Քաղաքի պաշտոնական կայքում և սոցիալական ցանցերում կհրապարակվեն պարբերական հաշվետվություններ ծրագրերի ընթացքի և ֆինանսական կատարողականի վերաբերյալ: